ՊԱՇՏՈՆ	Ֆինանսական վերլուծությունների բաժնի գլխավոր վերլուծաբան
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	12/09/2025թ.
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Երկարաժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է փորձառու, մոտիվացված և հմուտ ֆինանսական վերլուծությունների բաժնի գլխավոր վերլուծաբանի, ով պատասխանատու է ստորև նշված պարտականությունները կատարելու համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Բանկում նոր ներդրվող պրոդուկտների, նախագծերի, ինչպես նաև գործող սակագներում փոփոխությունների իրականացման ժամանակ ֆինանսական մոդելների մշակման աշխատանքների իրականացում,
- Շահութաբերության վերլուծությունների իրականացում ըստ գործող պրոդուկտների, հաճախորդների, հաճախորդների խմբերի,
- Բանկի եկամուտների և ծախսերի գծով վերլուծությունների իրականացում, գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ առաջարկների մշակման աշխատանքների իրականացում,
- Բանկի առանձին բիզնես ուղղությունների եկամուտների և ծախսերի վերլուծության իրականացում, գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ առաջարկների մշակման աշխատանքների իրականացում,
- Ներքին տրանսֆերտային գնագոյացման մեթոդաբանության մշակման և հաշվառման կազմակերպման աշխատանքներին մասնակցություն,
- Բանկի ադմինիստրատիվ-տնտեսական ծախսերի՝ տարբեր ուղղություններով շահութաբերության հաշվարկների իրականացման նպատակով բաշխման մեթոդաբանությունների մշակման աշխատանքներին մասնակցություն,
- Բանկի պրոդուկտների վաճառքի և սպասարկման գործընթացների տարբեր ուսումնասիրությունների իրականացում՝ ադմինիստրատիվ-տնտեսական ծախսերի բաշխման մեխանիզմների և բաշխման գործակիցների մշակման նպատակով,
- Բանկի բյուջեի կազմման աշխատանքներին մասնակցություն, նախորդ ժամանակաշրջանի բյուջեի կատարողականի մշակման աշխատանքներին մասնակցություն և անհրաժեշտ հաշվարկների իրականացում, ինչպես նաև բյուջեի կատարողականի գծով կանխատեսումների աշխատանքներին մասնակցություն:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն (Տնտեսագիտություն, Վիճակագրություն կամ հարակից այլ ոլորտներ)
- Նվազագույնը 3 տարվա համապատասխան աշխատանքային փորձ
- Բանկային պրոդուկտների և ծառայությունների իմացություն
- ՀՀ բանկային օրենսդրության լավ իմացություն
- Հաշվապահական գիտելիքներ
- MS Office ծրագրային փաթեթի գերազանց իմացություն, մեծ բազաների հետ աշխատելու կարողություն
- LS ծրագրի իմացությունը կդիտվի որպես առավելություն
- Ժամանակի արդյունավետ կառավարում
- Վերլուծական հմտություններ
- Ուշադրություն մանրուքների նկատմամբ, միաժամանակ մի քանի առաջադրանքներ կատարելու հմտություն
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/65 :Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկ»-ը հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ անվանումով:

«ԱյԴի Բանկ»-ի առաքելությունն է հաճախորդների համար լինել առաջին ընտրության լավագույն նորարար Բանկ՝ ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ

արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ https://www.idbank.am/: